

Լ Ա. ՎԱՐՂԱՆՅԱՆ

Իբրև բնական համակարգ՝ լեզուն անխուսափելիորեն ենթարկվում է հակասությունների միասնության դիալեկտիկական օրենքին: Լեզվի բնական (ոչ նշույթավորված, ուժեղ) տարրերի, գործընթացների կողքին իբրև հակակշիռ անալոգիան հանդես են գալիս ոչ բնական (նշույթավորված, թույլ) տարրեր, գործընթացներ, ինչը և ապահովում է համակարգի գոյությունը: Լեզվական համակարգի անվերջ ձգտումը կատարելության մշտապես խոչընդոտվում է նշույթավորված տարրերից: Եվ եթե համակարգի ճնշման ներքո այդ տարրերից ուղղները ենթարկվում են լեզվական ընդհանուր օրինաչափություններին, ապա փոխարենն անալոգիան առաջանում են նորերը: Առաջին հայացքից ավելույդ թվացող, ընկալողական դժվարություններ առաջացնող ոչ բնական տարրերը (հմմտ., օր., մանկան լեզվում՝ *ուտել եմ, ուտեցի՝ կերել եմ, կերա-ի* փոխարեն) լեզվի գոյության և զարգացման շարժիչ ուժն են: Նրանք անհրաժեշտորեն առկա են կանոնավոր ձևերի կողքին և ապահովում են լեզվական համակարգի գոյությունը:

Տարարմատությունը պատկանում է լեզվում դրսևորվող ոչ բնական երևույթների թվին: Երկտքերականների առաջնորդներից Հերման Օստհոֆն՝ առաջինն է փորձել ի մի բերել ու համակարգել հնդեվրոպական լեզուների տարարմատ ձևերը, պարզել դրանց առաջացման պատճառներն ու նշանակությունը: Մեկ դար ի վեր երևույթն արծարծվել, քննարկվել է տարբեր լեզվաբանների աշխատություններում, սակայն իր վերջնական ձևակերպումն այդպես էլ չի ստացել: Տարարմատության՝ մեզ հայտնի ամենաբազմակողմանի վերլուծությունը պատկանում է Իգոր Մելչուկին, որի ձևակերպումն էլ հենց հիմք է հանդիսացել շատ լեզվաբանների ուսումնասիրությունների համար. «Տարարմատությունը ո՛չ լեզվական միավոր է, ո՛չ գործողություն, ո՛չ էլ լեզվական նշան կամ նշանի մաս, կամ էլ նշանների ամբողջություն: Այն հարաբերություն է լեզվական հատույթային երկու նշանների միջև (X և Y): (...) Տարարմատության հարաբերության ժամանակ X և Y միջև ա) իմաստային տարբերությունն առավելագույնս կանոնավոր է, ք) ձևային տարբերությունն առավելագույնս անկանոն է»¹:

Տարբեր լեզվաբաններ տարարմատության առաջացման տարբեր աղբյուրներ են նշում, որոնք կարելի է խմբավորել ըստ *ինչույթային* և *բառային* փոփոխությունների:

Հնչույթային փոփոխությունները կանոնավոր ձևային հարաբերության մեջ գտնվող լեզվական երկու միավորների միջև կարող են խիստ անկանոն ձևային հարաբերություն առաջացնել: Օրինակ՝ ժամանակակից ֆրանսերենի *neveu-nièce* տարարմատ գույքը ձևավորվել է լատ. *nepos* բառի ենթակայի և խնդրի հոլովական ձևերի հիման վրա՝ ենթ. *huy. nepos > nies > nièce* և խնդ. *huy. nepotem > nevout > neveu*:

Բառային փոփոխությունը տարածամանակյա տեսանկյունից տարբեր արմատների քերականական ձևերի միաձուլումն է մեկ հարացույցում, իսկ համաժամանակյա տեսանկյունից՝ երկու լեզվական տարրերի միմյանց փոխարինումը՝ պայմանավորված գործառական ընդհանրությամբ: Դրանց հետ անմիջականորեն կապված է բառային խզումը: Միմյանցից հեռանալն առավել բնորոշ է բառակազմորեն կապված ձևերին. ածանցված ձևի հաճախակի կիրառությունն աստիճանաբար մեծացնում է նրա իմաստային և ձևային

¹ Sté Hermann Osthoff, Vom Suppletivwesen der indogermanischen Sprachen. Heidelberg: Kommissionsverlag von Alfred Wolff, 1899:

² Igor Mel'čuk, Beck David. Aspects of the theory of morphology (Trends in Linguistics: Studies and Monographs), 2006, p. 385-386.

տարբերությունը հիմնաձևից: Երևույթն ավելի հազվադեպ է թեքական հարացույցում՝ պայմանավորված թեքական ձևերի առավել նշույթավորմամբ:

Այսպես, Ջ. Բայբին տարարմատ հարացույցերի առաջացման պատճառներից է համարում թեքական ձևերի միջև խզումը: Այնուհետև օրինակ է ֆր. *aller-գնալ* բայի հարացույցը. լատ. *ire-գնալ* բայի դիմաց ֆրանսերենն ունի *aller-գնալ* բայը, որի հիմքում հավանաբար լատ. *ambulare-քայլել, գնալ-գալ* բայն է: Նույն ֆր. *aller-գնալ* բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի եզ. ք. *je vais, tu vas, il, elle va* և հ.ք. *ils, elles vont* ձևերը հանգում են լատ. *vādere-մեկնել* բային: Իսկ ապառնի ժամանակաձևի (*j'irai...*) հիմքում պահպանվել է լատ. *ire-գնալ* բայը: Փաստորեն մեկ հարացույցում միավորվել են իմաստով մոտ երեք բայերի քերականական ձևերը: Մեկ այլ օրինակ՝ հայ. *գալ* բայը, որի հիմքում հավանաբար հ.ե. **wā-* արմատն է, իր հարացույցի մեջ ներառում է *եկա* ձևը, որի հիմքում հ.ե. **g²em* արմատն է, նմանապես էլ՝ *մտել* բայի հիմքում հ.ե. **ed* կամ **ēd* արմատն է, իսկ *կերա, կե՛ր* ձևերի հիմքում՝ հ.ե. **g²er* արմատը:

Տարարմատությունը բնականության շատ թույլ աստիճան ունեցող լեզվական երևույթ է, բայց և խիստ դիմակայում ձևաբանական համանմանության ճնշման հանդեպ: Պետք է ընդգծել, որ տարբեր լեզուներում այն ընդգրկում է բառապաշարի գրեթե նույն շերտերը (լեզվի հիմնական բառաֆոնդ), հիմնականում վերաբերում քերականական նույն գործընթացներին (ածականների, մակբայերի համեմատության աստիճանների կազմություն, բայական հարացույցում՝ կերպային և ժամանակային զծեր, գոյականների իգական սեռի կազմություն և այլն): Սա վկայում է մարդկային մտածողության ընդհանրության մասին և թույլ է տալիս ենթադրել, որ տարարմատությունը գտնվում է մարդկային լեզվի զարգացման հենց ակունքներում: Ուստի և տարարմատ ձևերի ուսումնասիրությունը կարևոր է լեզվի էության պարզաբանման ու նրա զարգացման օրինաչափությունների բացահայտման համար:

Տարարմատության բնականության աստիճանը կարելի է որոշել ըստ Վ. Ու. Դրեյլերի սահմանած բնականության չափորոշիչների: Համաձայն դրանց՝ *ձևաշարադասային ու ձևաիմաստային քափանցիկությունը և ձևաբանական տրամագրայնությունը /պատկերանշանությունը* պետք է ավելի բնական լինեն, քան մթագնածությունը: Իսկ քանի որ կցական տիպի լեզուներն առավել կարևորում են այս երեք չափորոշիչները, ուստի այդ լեզուներում տարարմատությունը պետք է ավելի քիչ դիտվի, քան թեքական լեզուներում: Դա առաջին իսկ հայացքից հաստատվում է թուրքերենի փաստելով. իբրև ուժեղ կցական լեզու՝ թուրքերենը դրսևորում է տարարմատության շատ թույլ աստիճան: Ըստ Վ. Ու. Դրեյլերի՝ դիտարկումների՝ տարարմատության բարձր աստիճան պետք է ունենան ուժեղ թեքական լեզուները, իսկ թույլ թեքական լեզուներում այն աստիճանաբար պետք է նվազի: Հետևաբար տարարմատության առկայությունը թե՛ կցական, թե՛ անջատական լեզուներում պետք է դիտել իբրև նրանց զարգացման նախորդ՝ թեքական փուլի մնացորդ:

Ստորև ներկայացնում ենք բառաիմաստային մի քանի միկրոհամակարգերում դիտվող տարարմատ ձևերի (ազգակցական կապ, չանձ, ընտանի և վայրի թռչուններ, կենդանիներ մատնանշող 49 անուն, որոնք գործնականորեն բավարար են խնդրի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար)³ տիպաբանական համեմատության այդպիսիները:

Առավել թույլ կցական լեզուներում, մասնավորապես հայերենում և թոխարերենում, տարարմատության աստիճանն անհամեմատ բարձր է, քանի որ նրանք կցականության հետ համատեղում են նաև թեքական տարրեր: Ըստ բնական կանխատեսումների՝ թոխարերենը՝ իբրև կցական լեզու, լեզվաընտանիքի մյուս՝ թեքական և անջատական տիպերի լեզուների համեմատ (լատիներեն, հունարեն, ռուսերեն, գերմաներեն, նույնիսկ իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն) պետք է ունենա ավելի քիչ տարարմատ ձևեր⁴: Մեր դիտարկումներն այլ արդյունքներ են տվել. վերոհիշյալ լեզուների համեմատությամբ նշված միկրոհամակարգերում, հակառակ Դրեյլերի կանխատեսումների, թոխարերենն ու

³ St' u W. U. Dressler, Sur le statut de la suppléance dans la morphologie naturelle. *Langues*, juin 85, 78:

⁴ St' u B. П. Конецкая, Супплетивизм в германских языках, М., 1973:

⁵ St' u W. U. Dressler, նշվ. աշխ.:

հայերենն ունեն տարարմատության շատ բարձր աստիճան: Այս հարցի պարզաբանմանը թերևս կարող է օգնել տարածամանակյա մոտեցումը. թոխարերենը համարվում է հնդեվրոպական ավելի վաղ թեքական փուլի ժառանգորդ, նմանապես հայերենը պահպանել է հնդեվրոպական թեքական լեզվատիպի հիմնական առանձնահատկությունները, չնայած որ այժմ հանդես է գալիս իբրև առավելապես կցական լեզու:

Գերմաներենի և անգլերենի համեմատության ժամանակ դիտվում է տարարմատության զգալի աճ թեքականությունից դեպի անջատականություն: Այս փաստերը հաստատվում են նաև բայական համակարգում կատարած մեր դիտարկումներով (ըստ ժամանակի և խոնարհման կարգերի, դիմավոր և անդեմ ձևերի հիմքերի). լինելով ուժեղ անջատական լեզու՝ անգլերենը, այնուամենայնիվ, բայական համակարգում ցուցաբերում է տարարմատության բարձր աստիճան, ինչը թերևս պետք է բացատրել միջին անգլերենի ուժեղ թեքական բնույթով:

Հիմք-լեզու լատիներենը պատկանում է ուժեղ թեքական տիպին, հետևաբար պետք է ցուցաբերի տարարմատության բարձր աստիճան: Իսպաներենում ու իտալերենում լատիներենի համեմատությամբ տարարմատ ձևերի քանակը նվազում է: Փաստորեն այս լեզուներում անցումը թեքականությունից անջատականության (թույլ թեքական տարրերի պահպանմամբ) ուղեկցվել է տարարմատության նվազման միտմամբ: Սակայն այլ է պատկերը ֆրանսերենում, ռուսիներենում. տարարմատ ձևերի քանակը լատիներենի համեմատ աչատեղ ավելացել է: Սա պետք է դիտել իբրև միտումների հակառակ գործողության արդյունք. եթե համակարգի մի մասում երևույթը նշույթավորված է (թույլ), ապա մյուս մասում այն պետք է լինի ոչ նշույթավորված (ուժեղ):

Ըստ վիճակակազրական տվյալների՝ ֆրանսերենի բառապաշարն ամենից շատ է տարբերվում լատինական հիմնաձևերից, այն աստիճան, որ լատիներենն ու ֆրանսերենը տեղակայվում են հակադիր բևեռներում: Դա տեղի է ունեցել լատինական արմատների հնչյունական աղավաղումների պատճառով: Այսպես, լատ. *capra-էգ այծ* բառից առաջացել է ֆրանսերեն *chèvre* բառը, այնինչ մեր դիտարկած մյուս ռոմանական լեզուները պահպանել են լատիներենին մոտ ձևեր՝ իտ. *capra*, իսպ. *cabra*, պորտ. *capra*: Ավելին, լատիներենի ար./իզ. *caper- capra* ձևերի դիմաց ֆրանսերենն ունի *bouc- chèvre* տարարմատ գույզը:

Ելնելով ժամանակակից խոսակցական ֆրանսերենի զարգացման միտումներից՝ լեզվաբանները հաստատում են, որ այն թևակոխել է անցումային փուլ՝ անջատականությունից դեպի կցականություն: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ ֆրանսերենում պետք է սկսի գործել հակառակ՝ տարարմատության կրճատման միտումը:

Մեր դիտարկած լեզուների գերակշիռ մասը տարարմատություն է դրսևորում անձնական դերանունների հոլովական համակարգում՝ ուղիղ և թեք ձևերի միջև: Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններն ուժեղ տարարմատություն են դրսևորում գրեթե բոլոր լեզուներում: Թվի կարգում տարարմատության մասին խոսել կարող ենք թերևս միայն երրորդ դեմքում՝ ձևերի հետևյալ անհամարժեքության պատճառով. *մենք ≠ ես+ես*, իսկ *դու-ն և դուք-ը* համարժեք կարող են լինել միայն քաղաքավարական ձևում:

Անձնական դերանվան հարացույցում տարարմատության ակունքները հանգում են հնդեվրոպական նախալեզվին, որի համար վերականգնվում են հետևյալ ձևերը՝

	I դեմք		II դեմք	
	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ուղղտ հիմք	*egō, *(e)gōm	*ues, *mes	*tu, *tū	*jūs
Թեք հիմք	*me(n)-, *moi-	*nes-	*t(e)(ue)-	*ūes-

Երրորդ դեմքի դերանունը չի վերականգնվում, որովհետև, ինչպես ենթադրվում է, դրա փոխարեն գործածվել են ցուցական և անդրադարձ դերանունները: Այս տեսակետը կարող է ամրապնդվել մի շարք լեզվական փաստերով: Նախ, ըստ բնականության սկզբունքների, լեզվում առաջնային է համարվում երրորդ դեմքը, այնուհետև՝ երկրորդն ու

* Տե՛ս Գ. Բ. Չախուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., 1987, էջ 41:

առաջինը⁷: Աստիճանական այս զարգացումը առաջին և երրորդ դեմքի դերանունների միջև որոշակի բևեռացման պատճառ է դարձել: Երրորդ դեմքն ավելի ընդհանուր, ցուցական նշանակություն ունի, այն փոխարինում է ոչ միայն անձի, այլև ցանկացած այլ անվան: Այսպես, ըստ հայերենի երրորդ դեմքի *նա* անձնական դերանվան ծագումնաբանական վերլուծությամբ⁸, *ն*-ն մերձավոր առարկաներ նշող ցուցական հոդ է, իսկ դերանվան հիմքում հ.ե. **no-այն* դերանունն է: Թոխարերենում նույնպես բացակայել է երրորդ դեմքի անձնական դերանունը: Լատիներենում չկա երրորդ դեմքի անձնական դերանուն, և այդ նշանակությունն արտահայտվում է ցուցական դերանուններով (*is, ea, id; hic, haec, hoc; ille, illa, illud*): Ֆրանսերենն իր երրորդ դեմքի անձնական դերանունները կազմել է լատիներենի ցուցական դերանունների հիման վրա:

Է. Բենվենիստի վերլուծությունների համաձայն՝ դիմային համակարգերը կառուցվում են ժխտողական հակադրությունների միջոցով՝ փոխհարաբերություն դեմքի (1-ին, 2-րդ դեմքեր՝ նշույթավորված) և ոչ դեմքի (3-րդ դեմք՝ ոչ նշույթավորված) միջև, նաև՝ փոխհարաբերություն եզակի թվի (ոչ նշույթավորված) և հոգնակի թվի (նշույթավորված) միջև: Այսպիսով՝ եզակի թվի երրորդ դեմքը հանդես է գալիս իբրև գերազանցապես չնշույթավորված, այսինքն՝ ուժեղ ձև: Այն ավելի շատ է կապված օբյեկտիվ իրականության հետ, այնինչ առաջին և երկրորդ դեմքերն առավելապես դիմային նշանակություն ունեն:

Դիտարկենք մեկ այլ փաստ. ժամանակակից ֆրանսերենի խոսակցական տարբերակում դիտվում է հոգնակի թվի առաջին դեմքի *nous* անձնական դերանունը երրորդ դեմքի *on* անորոշ դերանվամբ փոխարինելու միտում: Ֆրանսերենի բայական հարացույցում դեմքի և թվի կարգերի արտահայտման գերակշիռ միջոցն առաջադաս անձնական դերանուններն են: Սակայն հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերում ավելանում են [ծ] և [e] թեքական տարրերը՝ լրացուցիչ մի հետադասություն այնպիսի մի հարացույցում, որտեղ գերիշխում է առաջադասությունը:

Այսպես՝

je vois [vwa]	nous voyons [vwajɔ̃]
tu vois [vwa]	vous voyez [vwaje]
il, elle voit [vwa]	ils, elles voient [vwa]

Փաստորեն այս ընդհատվող խորհյուրանշումն անբնական է, և հոգնակի թվի առաջին դեմքի *nous* դերանվան փոխարինումն *on*-ով մեկնաբանվում է իբրև բնական փոխակերպում այն առումով, որ նպաստում է բայական հարացույցի միասնեռությանը: Երրորդ դեմքի չնշույթավորված ձևի պատկերանշանային արտահայտությունը համապատասխանում է գոյի՝ տարբերակիչ նշույթի կամ վերջավորության բացակայությանը: Լեզվական փոփոխությունը փաստորեն ձգտում է հարացույցը փոխակերպել այնպես, որ արդյունքը մոտենա այդ գծապատկերին՝ օպտիմալացնելով այն պատկերանշանության տեսանկյունից:

Անձնական դերանվան ուղիղ և թեք հոլովների միջև տարարմատության պատճառները պետք է փնտրել մայրկային լեզվի ձևավորման ամենավաղ փուլերում: Գեռնա XIX դարի վերջին Ռ. դը լա Գրասսերին հայտնել էր այն տեսակետը, որ նախապես անվան և բայի միջև տարբերակում չի եղել: Ընդունելով անվան նախնականությունը՝ նա գտնում է, որ «ես քայլում եմ» նշանակությունը ժամանակին արտահայտվել է «*իմ գնալը*» կառույցով: Փաստորեն Ռ. դը լա Գրասսերին կողմ է ստացական նշանակության նախնականությանը: Տարբեր լեզուների վերոհիշյալ փաստերը վկայում են ցուցական նշանակության սերտ կապը երրորդ դեմքի անձնական դերանվան հետ: Նաև, ինչպես նշեցինք, բնական սկզբունքների համաձայն՝ առաջնությունը տրվում է երրորդ դեմքին: Կարելի է, որտեմն, ենթադրել ցուցական դերանվան նախնականությունը՝ «այն» ընդհանուր նշանակությամբ, և երրորդ դեմքի անձնական դերանվան ավելի ուշ կայացումը ցուցական դերանվան հիման վրա: Ընդ որում, անձնական դերանունը պահպանել է նախնական ցուցական նշանակությունը, ինչը թերևս դեմքերի բևեռացման պատճառ է դարձել:

⁷ Տե՛ս Յու. Մ. Գաբրիելյան, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 182:

⁸ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971:

Մ. Դ. Կացնեխտնը ուղիղ և թեք հոլովների միջև առկա տարարմատության պատճառները հանգեցնում է նախադասության մինչանվանական փուլին, երբ դեռևս չեն եղել ո՛չ ուղղական, ո՛չ էլ հայցական հոլովներ: Տարարմատությունը նա կապում է ուղղական հոլովի ուշ կայացման հետ: Այս վարկածն ամրապնդվում է Յու. Գաբրիելյանի նոր վերլուծությամբ, համաձայն որի ընդհանուր հնդեվրոպական շրջանի համար վերականգնվում է սեռական հոլովը՝ առարկայի հատկանիշի իմաստով⁹: Ընդունելով սեռական հոլովաձևի նախնականության և ուղղականի ավելի ուշ կայացման մասին այս տեսակետը՝ զարգացման նույն հաջորդականությունը կարող ենք ենթադրել նաև անձնական դերանվան հարացույցում, ինչը թերևս կարող է համարվել անձնական դերանունների տարարմատության առաջացման ամենահավանական պատճառներից մեկը:

Հարց է ծագում՝ ինչպե՞ս է, որ երկու՝ բնական և ոչ բնական երևույթներից վերջինն է հաղթում, և ինչպե՞ս է այդ ոչ բնական երևույթը դիմակայում լեզվի ձևաբանական համամասնության ձգտմանը: Դեռևս երիտբերականները փորձել են դա բացատրել գործառական հաճախականությամբ. լեզվում հաճախակի գործառույթ ունեցող անկանոն ձևերը (իսկ տարարմատությունը դիտվում է բառապաշարի փոքր ծավալ, բայց ամենահաճախակի կիրառություն ունեցող շերտերում) անընդհատ կրկնվում, լսվում են բառապաշարում, հիշվում անգիր, այնինչ կանոնավոր ձևերը կարող են ընդհանրաճալ քերականական կանոնի միջոցով: Հ. Օստինոֆը դրա հիմքում տեսնում է մարդու հոգեբանական ձգտումն՝ առանձնացնելու, ընդգծելու իրեն ավելի մոտ կանգնած իրերն ու երևույթները: Սակայն կարծում ենք, որ հոգեբանական գործոնին չպետք է գերապատվություն տալ, այլ պետք է փորձել պատճառները գտնել լեզվի զարգացման ակունքներում: Կարևոր է նաև իմաստային պլանի ներգրավումը. տարարմատությունը դիտվում է այնպիսի քերականական կարգերում, որոնք նշանակալից իմաստափոխություն են առաջացնում, տվյալ դեպքում՝ հոլովի կարգը, կամ բայական հարացույցում՝ կերպի, ժամանակի կարգերը: Դեռևս Ու. Վայնրայխը հատկաբանությունը ձևակերպել էր իբրև դարձվածք, որի նշանակությունը տարարմատ է իր բաղադրիչների նշանակությունների ամբողջության նկատմամբ: Փաստորեն իմաստային պլանում նույնպես կարող ենք գործ ունենալ տարարմատության հետ: Իմաստաբանության ներգրավումը տարարմատության ուսումնասիրության մեջ կտա երևույթի ավելի բազմակողմանի, լիարժեք ուսումնասիրության հնարավորություն: Հատկապես որ՝ «...սերտ կապերը տարարմատության և դարձվածայնացման միջև տեսականորեն շատ կարևոր են. նրանք ցույց են տալիս, որ տարարմատությունը վնասակար երևույթ չէ, այլ լիովին նորմալ զարգացում»¹⁰:

Բնականության տեսանկյունից նշույթավորված երևույթի առկայությունը լեզվում բացատրվում է հետևյալ կերպ. բնականության բազում միտումները բախումների մեջ են, ուստի և ցանկացած լեզու պետք է պարունակի ինչպես բնական (ըստ որոշ միտումների), այնպես էլ ոչ բնական (ըստ այլ միտումների) գործողություններ: Եվ բնականության թույլ աստիճան ունեցող այնպիսի մի լեզվական երևույթ, ինչպիսին տարարմատությունն է, նույնպես կարող է բացատրվել միտումների բախման և տիպաբանական հիմնավորման տեսանկյունից:

Л. С. ВАРДАНЯН – Проблема супплетивизма в типологическом языкознании. – Статья является попыткой анализа явления супплетивизма в языке с позиций естественного языкознания. В результате применения типологического подхода выясняется, что высшую степень супплетивизма проявляют сильные флективные языки, а низшую степень – сильные агглютинативные языки. Сделана попытка объяснить супплетивизм личных местоимений некоторой смысловой поляризацией между I, II, и III лицами личных местоимений, а также гипотезой относительно предварительности родительного падежа.

⁹ Տե՛ս Յու. Գաբրիելյան, Հնդեվրոպական լեզուներում հոլովական ձևերի զարգացման խնդիրը, ԲԵՀ, 2005, թիվ 3, *անյնի*՝ Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, էջ 175-177, 179:

¹⁰ Igor Mel'čuk, Beck David, նշվ աշխ., էջ 431: